

ԲԱՆԱԿԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



ՆԵՐՋԱՂԱՋԱԿԱՆ ԻՐԱՎԿԻՃԱԿԸ ԿԻԼԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԺԴ ԴԱՐԻ 30-40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՍՍԻ ԺՈՂՈՎԸ

Գ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԺԴ դարի 30-40-ական թթ. Կիլիկյան Հայաստանը թևակոխեց այնպիսի ժամանակաշրջան, երբ Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական գերիշխանություն նվաճած Եգիպտոսի սուլթանությունը ձգտում էր վերջնականապես գրավել երկիրը: Եգիպտոսի ու նրա դաշնակիցների դեմ մղվող պայքարում ակնկալվող ռազմաքաղաքական և դիվանագիտական օժանդակությունը կապվում էր նաև քրիստոնյա աշխարհի, մասնավորապես Կիպրոսի խաչակրաց թագավորության, Արևմտյան Եվրոպայի և Բյուզանդիայի հետ: Եգիպտոսի հզորացումը, խաչակրաց տիրույթների անկումը, իշխանության թուլացումը և մոնղոլների կողմից մահմեդականության ընդունումը Կիլիկյան Հայաստանին կողմնորոշում էին դեպի Արևմուտք. «...Բայց լսեցաք համբալ բարի, թե ֆրանգ ազգն շարժի վասն տեղացս տերունի՝ Երուսաղեմայ սուրբ քաղաքի. երանի թե այս մեզ լինի, որ մեր բեկեալ սիրտս կանգնի...»¹: Սա սոսկ տարածված լուրերի արձագանք չէր, այլ արտաքին կողմնորոշումը սնող հասարակական-քաղաքական որոշ տրամադրությունների արդյունք: Պատահական չէ, որ Եգիպտոսի հետ 1337 թ. կնքված հաշտության պայմանագիրը որոշ նախապայմաններ ուներ. «...ոչ իւիք առնում զայդ յանձն, բայց եթե երդմամբ խոստանայցես ինձ՝ չառնել երբեք պատգամաւորութիւն ընդ արևմտեան ազգս, ոչ ընդունիլ և ոչ գրել թուղթ՝ կամ առաքել դեսպան առ պապն Հռովմայ: Եւ Լևոն արքայ քանգի նեղեալ էր, ստիպեցաւ խոստանալ, երդմամբ՝ զի յայնմհետէ մի՛ առաքեսցէ զդեսպան որ կամ գթութիւն ինչ առ քահանայապետն Հռովմէական»²: Արևմուտքի, մասնավորապես պապականության հետ փոխհարաբերությունները այս կամ այն ձևով աղերսվում էին նաև հայոց եկեղեցու հետ, քանզի եկեղեցիների միջև առկա որոշակի տարբերությունները սովորաբար դրվում էին բանակցությունների հիմքում: Փաստորեն հայոց եկեղեցու ներկայությունը դիվանագիտական հարաբերություններում քաղաքական կողմնորոշմանը զրկում էր ինքնուրույնությունից և նրա բովանդակությանը փոխանցում դավանաբանական հատկանիշներ: Սա գրեթե անհնարին էր դարձնում քաղաքական կողմնորոշման միասնականացումը, ուստի ձևավորվում էին հակոտնյա խմբավորումներ, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր գերակշռող դիրք ստանալ արժարժվող խնդիրների լուծման ժամանակ:

Լևոն Ե թագավորի (1320-1341) գործունեությունը պարզորոշ վկայում է, որ նա ևս միտված էր արևմտաեվրոպական կողմնորոշմանը և իր շուրջն էր համախմբել Արևմուտքից ռազմաքաղաքական օժանդակություն ակնկալող ուժերին, որոնք առաջատար դեր ստանձնեցին Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության հետ կապված խնդիրները լուծելիս: Այս քաղաքականությունը պարզորոշ երևաց, երբ չափահաս դարձած թագավորը 1329 թ. հրամայեց սպանել

¹ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. Խաչիկյան, Եր., 1950, էջ 273:

² Մ. Չամչյանց, Հայոց Պատմություն, հ. Գ, Եր., 1984, էջ 337:

Օշին Պայլ և Կոստանդին Գունդատաբլ խնամակալ եղբայրներին³: Նա արքունիք հրավիրեց իր հորաքրոջ որդիներին՝ Ջիվան և Բոհեմունդ Լուսինյաններին. «Եւ յետ այնորիկ վերադարձոյց ի Հայաստան գօրաքեռորդին իւր զիշխանն Ջեհան Լուսինեան, զոր արար գունդատապլ Հայոց, և ետ նմա ի կնութիւն զՍուլթան տիկին, զդուստր արքային Վրաց. և զեսպուհն Բոհեմունդ զեղբայր նորա, զոր արար կոմս Կոռիկոսի և ետ նմա ի կնութիւն զդուստր Բօդունեհի⁴, մեծի մարաջախտի թագաւորութեան»⁵:

Լևոն Ե թագավորի հորաքույր Չապելը (Իգաբել) 1293 թ. ամուսնացել էր Կիպրոսի թագավոր Հենրի Բ Լուսինյանի եղբոր՝ Ամորիի հետ, որը 1311 թ. զոհ գնաց Կիպրոսի ավազանու կազմակերպած դավադրությանը: Չապելը ուներ հինգ որդի՝ Հենրի, Հուգո, Գվիդոն, Ջիվան, Բոհեմունդ: Չապելը, Հենրիին, Հուգոն զոհ գնացին Օշին խնամակալի կազմակերպած դավադրությանը. «...եսպան և զքոյր թագաւորին Օշնի զՉապլունն և զաւագ որդի նորա՝ որք յետոյ սպանեալ եղեն ի թագաւորէն Լևոնէ Բ (2) եղբարքքն...»⁶: Պատկերը ամբողջության մեջ ներկայացնելու համար նշենք, որ Լևոնի հրամանով սպանում են նաև իր կնոջը՝ Օշին խնամակալի դուստր Ալիծ թագուհուն: 1331 թ. նոյեմբերի 3-ին Լևոնը ամուսնացավ Սիկիլիայի թագավոր Ֆրիդրիխ Բ Արագոնացու (1296-1337) դուստր Կոստանցիայի հետ, որը Կիպրոսի թագավոր Հենրի Բ-ի այրին էր: Փաստորեն արտաքին կողմնորոշման շուրջ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների տարածայնությունները սկսում են խորանալ նաև այն պատճառով, որ հայոց արքունիքում կարևոր պաշտոններ են ստանձնում նաև կաթոլիկ դավանանքին պատկանող մարդիկ, որոնց գործունեությունը լարվածություն է ստեղծում երկրի ներքաղաքական կյանքում. «...ի դառն եւ յանբարի ժամանակ, որ չէ կար ումեք եւ հմար ընդ գրով արկանել զմեծ աղէտս և զանհնարին ազգի ազգի նեղութիւնս եւ զվիշտս, որ էանց ընդ եկեղեցին Քրիստոսի, եւ դեռ ես անցանէ յարտաքին եւ ի ներքին պատերազմողաց, եւ մանաւանդ ընդ ազգս Հայոց»⁷:

Խաչակրաց արշավանքի հետ կապված ռազմաքաղաքական ակնկալություններն ու հույսերը ի դերև ելան, քանզի 1337 թ. Անգլիայի ու Ֆրանսիայի միջև սկսվեց Հարյուրամյա պատերազմը (1337-1453) և վերջինս, զբաղված լինելով երկրի անկախության և տարածքային ամբողջականության համար մղվող պայքարով, այլև չէր կարող հետաքրքրություն ցուցաբերել Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Սակայն Կիլիկյան Հայաստանի կառավարող շրջանակների մի մասը շարունակում էր բանակցությունները Արևմուտքի հետ, որն իր հերթին ավելորդ լարվածություն էր ստեղծում ներքաղաքական կյանքում. «Այս դժուար կացութեան պատճառաւ երկու հակոտնեայ հոսանքներ երեւցան Կիլիկիոյ մէջ. Յակոբ Ստեցի (1327-41) կաթողիկոսը, եպիսկոպոսները եւ կղերը կառաջարկէին որ այնուհետեւ ոչ նամակներ եւ ոչ ալ դեսպաններ դրկուէին Եւրոպա...»⁸: Պայքարը ավարտվում է նրանով, որ Լևոնը և նրա

³ Տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելումներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր Մլիքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 158:

⁴ Խոսքը վերաբերում է Պաղտին Մարաջախտին, որը մահացավ 1337 թ. Հալեպի քանդում (տե՛ս Հիշատակարաններ..., էջ 295):

⁵ «Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն Հայոց», Ս.Պետերբուրգ, 1891, էջ 31:

⁶ Սամուէլ Անեցի, էջ 157:

⁷ «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Նորայր եպիսկոպոս Պողարեան, հ. IV, Երուսաղեմ, 1969, էջ 427:

⁸ Գ.ր. Պետրովիչ, Միաբանող եղբայրները եւ հայ եկեղեցին (1330-1360), «Հանդես ամսօրեայ», 1969, 11-12, էջ 477:

կողմնակիցները կաթողիկոսին գահընկեց են անում. «Տէր Յակոբ ի Սըսոյ, կացեալ ամս ԺԷ, եւ վասն թագաւորին Լեւոնի յանդիմանելոյ ի նմանէ ընկեց յաթոռուն»⁹: Հակոբ Ստեցի կաթողիկոսի գործունեությունը առավել ամբողջական պատկերացնելու համար նշենք, որ հայոց եկեղեցուն ներկայացված «117 մուրթությունների» մի քանի կետեր, մասնավորապես 77, 78, 87, վերաբերում են նրան. «...իբր թէ նա հալածեալ իցէ զուղղափառս. և թէ՛ արգելեալ իցէ զլատինս չառնել քարոզութիւն ի Հայս. և մի՛ ասել զպապն զոլ զուխս եկեղեցույ. այլ թէ ինքն կաթողիկոսն իցէ պապ յարևելս...»¹⁰:

Այժմ փորձենք պարզաբանել Հակոբ Ստեցի կաթողիկոսի գահընկեցության ժամանակի հարցը, որը կարևոր է նրանով, որ Լևոն Ե թագավորի մահը ևս տեղի է ունեցել նույն տարում. «ԶՂ: Մեռո Մելք Նասրն: Եւ ի յայս տարիս ձգեցին յաթոռոյն զտեր Յակոբ, և նստաւ յաթոռ տեր Մխիթար կաթողիկոս: Եւ ի յայս տարիս մեռո Լևոն թագօրն, Աւշին թագօրին որդին, Սսոյ տերն»¹¹: Աղբյուրներում պահպանվել է նաև տեղեկություն թագավորի մահվան օրվա վերաբերյալ. «Ի թիւն ԶՂ (1341) սատակեցաւ տաճկաց սուլտանն Միլք Նասրն: Եւ ի ն/ս/ոյն ամիս ԻԷ (27) յաղվեստօնսն մեռաւ Լևոն թագաւորն՝ որդի Օշին թագաւորիս առաջնոյ»¹²:

Պապականության հետ բանակցություններ վարելու համար 1341 թ. գարնանը Լևոնը Ավինիոն է ուղարկում նոր պատվիրակություն, որը գլխավորում էին ասպետ Թորոս Միքայելյանցը և Դանիել Թավրիզեցին (Minor): Այդ ժամանակ պապական արքունիքում գտնվող հայ միաբարները կազմել և Բենեդիկտոս ԺԲ պապին (1334-1342) էին ներկայացրել հայոց եկեղեցուն վերագրվող «117 մուրթություններ» պարունակող մի գրքույկ: Պապը հայ դեսպաններին է հանձնում մի օրինակ այս գրքույկից և 1341 թ. օգոստոսի մեկով թվագրված երկու նամակ. «...մին՝ ուղղուած «պատուական որդոյ Լեւոն թագաւորի» «եւ միւսը՝ սիրելի եղբօր (իւրոյ) Մխիթարի» ու խնդրում մուրթություններին պատասխանելու համար ժողով հրավիրել¹³: Մխիթար Գռնեբցի կաթողիկոսը (1341-1355) Ավինիոնից վերադարձած Դանիել Թավրիզեցուն հանձնարարում է կազմել պատասխան տեքստը, որը հաջողությամբ լուծում է այդ խնդիրը¹⁴: Նրա ընտրությունը պատահական չէր: Նա Ֆրանցիսկյան միաբանության անդամ էր և Սսի բարձրագույն դպրոցներից մեկի ռաբուն, ուստի լավ ծանոթ էր երկու եկեղեցիների դավանանքին, որը պարզորոշ երևում է պատասխան տեքստում: 1341 թ. վերջին Դանիել Թավրիզեցին Ավինիոն է տանում «117 մուրթությունները» հերքող պատասխան գրությունը:

1341 թ. օգոստոսի 27-ին անսպասելի մահանում է Լևոն Ե՝ ուղիղ գծով Հեթումյան արքայատան վերջին ներկայացուցիչը: Մենք համակարծիք չենք, որ նա զոհ է գնացել քաղաքական դավադրության¹⁵: Նման եզրակացության համար հիմք է հանդիսացել Լևոն Ե-ի արևմտյան կողմնորոշումը: Սակայն աղբյուրներում որևէ տեղեկության բացակայությունը և այն, որ իշխանությունը անցնում է նրա կաթոլիկ ազգականներին, նման եզրահանգման տեղիք չեն տալիս: Հեթում Ախտուց տիրոջ

⁹ Ն. Պողարեան, հ. IV, էջ 228:

¹⁰ Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 344:

¹¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր, № 5599, էջ 221բ:

¹² Ա. Մաթևոսյան, Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», № 4, Եր., 1963, էջ 193-194:

¹³ Տե՛ս Գր. Պետրովիչ, նշվ. հոդվ., էջ 480:

¹⁴ Տե՛ս Recueil des Historiens des croisades. Documents latins et francais relatifs o' l'Armenie, Paris, 1906, էջ 559-650:

¹⁵ Տե՛ս Լ. Կոզեան, «Հայոց եկեղեցին» մինչև Փյոթնոտեան ժողովը, Բէյրութ, 1961, էջ 473:

վկայությամբ Լևոնը երկրի խնամակալությունը հանձնում է Ջիվան Լուսինյանին. «Եւ եղիր պայլ հայոց զպարոն ճուան բրինձն Սրո տերոջն...»¹⁶: Եթե վստահենք Հովհ. Դարդեյի հաղորդած տեղեկություններին, ապա Լևոն թագավորը լուծել էր նաև գահաժառանգության խնդիրը. «Եւ զի մեռաւ անորդի, հրաման ետ ի կենդանութեան անդ իւրում զի թագաւորութիւնն Հայոց զկնի մահուան իւրոյ անցցէ յերեցն յորդիս Չապէլ տիկնոջ քեռ հոր իւրոյ Օշին արքայի...»¹⁷: Այս տեղեկությունը կասկածանքի տեղիք է տալիս և հավաստում ավելի ուշ տեղի ունեցածը, քանզի իրադարձություններին ժամանակակից Հերոն Ախտուց տերը խոսում է միայն պայլ նշանակելու մասին: Փաստորեն Ջիվան Լուսինյանը մոտ մեկ տարի կատարում է խնամակալի պարտականություններ, և, կարծում ենք, հարկ չկա նրան ներկայացնելու արքայական դասաշարում. «Յայնժամ առաքեաց նա հրեշտակութիւն առ եղբայր իւր երէց, իշխանն Գուի Լուսինեան ի Կոստանդնուպոլիս, թէ որպէս արքայն Լևոն Դ իւրեանց մօրեղբօրորդի, մեռեալ անգաւակ, արարեալ էր զնա ժառանգ իւր իբրև մերձաւորագոյն ազգական արու. և թէ ինքն՝ իշխանն Ջեհան, վարէր զարքայութիւն ի սէր եղբօրն, մինչև եկեալ հասցէ նա ի Հայաստան»¹⁸:

Այդ ժամանակ Գվիղոն Լուսինյանը գտնվում էր Բյուզանդիայում և բարձր դիրք էր զբաղեցնում կայսերական արքունիքում¹⁹:

Պատկերն ամբողջացնելու նկատառումով նշենք, որ դեպքերի ժամանակակից Ներսես Պալիանենցը արձանագրել է. «Պարոն Ջուան, հօրքեր որդի Լևոնիս, պայլ կացեալ ամ մի:

Կիտ, եղբայր Ջուանիս, ամս Բ (2):

Կոստանդին, ազգական Լևոնի, կեայ այժմ և թագաւորէ ամս է (7), որ է թականին հայոց Պ (800) և Քրիստոսի ՌՅԾԱ (1351)»²⁰:

Գվիղոն Լուսինյանի ընտրությունը պատահական չէր: Ամենայն հավանականությամբ արքունիքը հաշվի էր առել. ա) նրա բարձր դիրքը և հեղինակությունը Բյուզանդիայում, բ) ազգակցությունը Կիպրոսի արքայատան հետ: Սկզբում նա համառորեն հրաժարվում էր հայոց գահից: Սակայն, գժտվելով կայսերական գահը զավթած Հովհաննես Կանտակուզենոսի հետ, Գվիղոնը համաձայնում է հայոց արքունիքի առաջարկին. «Իբրև լուա Գուի Լուսինեան զկամս եղբօր իւրոյ Ջեհան իշխանին Լուսինեան, անսաց նմա և եկն ի Հայաստան բազմութեամբ զօրականաց յօգնութիւն և ի կազդորումն աշխարհին, որ վնասեալն էր և խաթարեալ մեծապէս ի հակառակորդաց անտի հաւատոյ, ի թուրքաց ասեմ և ի սարակիճնսաց: Եւ եղև նա ընկալեալ մեծապատիւ փառօք յաշխարհի թագաւորութեան իւրոյ և պսակեցաւ ի Սիս քաղաքի շքեղաշուք հանդիսի, յամի շնորհաց 1342, յամսեանն հոկտեմբերի»²¹:

Գվիղոն Լուսինյանը կառավարել է Կի²², Կիտ²³, Կոստանդին²⁴ անուններով:

¹⁶ Ա. Մաքևոսյան, նշված հոդվածը, էջ 194:

¹⁷ Հովհ. Դարդեյ, էջ 31:

¹⁸ Նույն տեղում, էջ 32:

¹⁹ Հրաչ Բարթիկյան, Գվիղոն Լուսինյանը Բյուզանդիայում և Կիլիկյան Հայաստանում, «Աշտանակ», Բ, Եր., 1998, էջ 134-142:

²⁰ Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. II, Եր., 1956, էջ 205-206:

²¹ Հովհ. Դարդեյ, էջ 32-33:

²² Ա. Մաքևոսյան, նշված հոդվածը, էջ 194:

²³ Գ. Ալիշան, Հայապատում, Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 545:

²⁴ Մամուկէ Անեցի, էջ 168:

Նրա առաջին քայլերից մեկը եղավ պապական արքունիք դեսպանություն ուղարկելը, որն այս անգամ գլխավորում էր իր եղբայր Բոհեմունդը: Կիլիկյան Հայաստանի և պապականության դիվանագիտական հարաբերություններում բացի ռազմաքաղաքական օգնության խնդրից շոշափվում էր նաև «117 մոլորությունների» հարցը, քանզի պապական արքունիքը չէր բավարարվել Դանիել Թավրիզեցու պատասխանով. «...բայց պապը չի գոհանա և կառաջարկի, որ հայերը հատուկ եկեղեցական ժողով հրավիրեն և քննութեան առնեն հիշեալ կետերը...»²⁵:

Հայագիտության մեջ տարբեր տեսակետներ կան Սսի ժողովի հրավիրման ժամանակի վերաբերյալ: Մովորաբար այն թվագրում են. 1342 թ.²⁶, 1343 թ.²⁷, 1344-1345 թթ.²⁸, 1345 թ.²⁹: Ժողովի արձանագրության մեջ նշված է միայն, որ 1342 թ. Բեմեղիկոսու ԺԲ պապից ստացել են «մոլորությունների» գրքույկը, և դրան պատասխանելու համար Մխիթար կաթողիկոսը և Կոստանդին թագավորը ժողով են հրավիրել³⁰: Նրան մասնակցում էին.

Արքեպիսկոպոսը

- Տեր Բարսեղ Սսի
- Տեր Վարդան Տարսոնի
- Տեր Ստեփանոս Անարգաբայի
- Տեր Մարկոս Կեսարիայի
(Կապաղովկիա)
- Տեր Բարսեղ Իկոնիայի
- Տեր Սիմեոն Սեբաստիայի

Վարդապետը

- Դանիել Մինոր Սսի ռաբունի
- Բարսեղ Մաշկևորի ռաբունի
- Հովհաննես կաթողիկոսարանի վարդապետ
- Ներսես վարդապետ Փոսեմանդայի (Փոս)

Եպիսկոպոսը

- Տեր Բարսեղ Բարձրբերդի
- Տեր Գրիգոր Ադանայի
- Տեր Հովհաննես Այասի
- Տեր Ներսես Կապանի
- Տեր Հովհաննես Մաշարդի
- Տեր Գրիգորիոս Գերմանիկայի
(Մարաշ)
- Տեր Բարսեղ Անկուրիայի
- Տեր Դավիթ Տարսոնի
- Տեր Դանիել Չմշկածափ
- Տեր Ստեփանոս Տրապիզոնի
- Տեր Պողոս Կոկիսոնի
- Տեր Դավիթ Համոնի
- Տեր Գրիգորիոս Մաշկևորի

Վանահարք

- Հովհաննես Ալևերի
- Կարապետ Մեծքարի
- Թորոս Մովսիսանոցի
- Ստեփանոս Միակեցեբրի
- Հովհաննես Բլրի
- Կոստանդին Լիսականի
- Հայրապետ Ռամանոսի
- Հովհաննես Զելեղականի
- Լևոն Գերմաղբյուրի
- Դավիթ Փրկչի
- Լևոն Ավագերեց թագավորական պալատի
- Հակոբ ավագերեց Սսի և այլ երիցունք
- Բարսեղ Ավագերեց Ադանայի և այլ երիցունք

²⁵ Մ. Օրմանեան, Ազգապատում, Բ հ., մասն Ա, Պէյրուք, 1960, էջ 1866:

²⁶ Տե՛ս Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 341:

²⁷ Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 147, 559:

²⁸ Տե՛ս V. Langlois. Essai Historique et critique sur la constitution sociale et politique de l'Armenie, Petersbourg, 1860, էջ 36:

²⁹ Տե՛ս Գ. Микаелян, История киликийского армянского государства, Ер., 1952, էջ 462:

³⁰ Տե՛ս I. D. Mansi, Sacrorum conciliorum nova et amplissima collectio, vol. 25, Grat-Austria, 1961, էջ 1186:

Տեր Մեսրոպ Խորձենի
Տեր Գրիգորիոս Տիանիայի

Աստվածատուր ավագերեց
Տարսունի և այլ երիցունք
Կոստանդին փակակալ և մեծ
եկեղեցիների այլ փակակալներ
Կոստանդին երեց Ս. Սոֆիայի
Հովհաննես երեց Հեթումաշենի³¹:

Առանց թեմը նշելու հիշատակվում են

Տեր Հովհաննես
Տեր Կոստանդին
Տեր Հովհաննես
Տեր Ստեփանոս

Կաթողիկոսարանի եպիսկոպոսները

Տեր Սարգիս
Տեր Բարսեղ
Տեր Գրիգորիոս

Կաթողիկոսարանի ատենադպիր Տեր Բարսեղ:

Ժողովի մասնակիցների դասաշարի ուսումնասիրության հետ կապված առաջին խնդիրը կաթողիկոսի անվան բացակայությունն է: Այս կապակցությամբ չենք կարող եզրակացնել, որ Մխիթար Գռներցին ինչ-ինչ պատճառներով ժողովին չի մասնակցել: Հարցադրման պատասխանը կարող ենք ներկայացնել այն համատեքստում, որ ներկա աշխարհականների անունները ևս բացակայում են, իսկ որ նրանք ժողովին մասնակցել են, կասկածանքի տեղիք չի տալիս: Խնդիրը հավանաբար կապված է ժողովի բնույթի և քննարկվող հարցադրումների հետ: Իրավիճակը դասավորվել էր այնպես, որ հայոց եկեղեցին ժողով էր հրավիրել իրեն վերագրվող «մոլորություններին» պատասխան տալու համար, ուստի աշխարհականների ստորագրությունները բացակայում են: Ինչ վերաբերում է կաթողիկոսին, ապա նա թագավորի հետ նախագահել է ժողովը և որպես այդպիսին չի ներկայացվել ստորագրողների ցանկում:

Հայոց եկեղեցուն ներկայացվող «117 մոլորություններում» տեղ են գտել ինչպես կաթոլիկ եկեղեցու հետ ունեցած տարբերությունները, այնպես էլ ոչ քիչ թվով անհիմն մեղադրանքներ: Թերևս այս ծայրահեղությունների պատճառով է, որ «մոլորությունները» քննադատել են նաև պապականության քաղաքականությունը պաշտպանող որոշ հեղինակներ³²: «Մոլորություններին» անդրադարձած հեղինակների մեծ մասը սովորաբար ուշադրություն է դարձրել այն կետերին, որոնք վերաբերում են եկեղեցիների միջև գոյություն ունեցող ծիսադավանաբանական տարբերություններին³³: Ավելացնենք, որ 110-րդ «մոլորությունը» արժանացել է առանձին ուսումնասիրության³⁴: Մենք կփորձենք պարզաբանել հայոց եկեղեցու կազմակերպմանը վերաբերող հետևյալ հարցադրումները. ա) հայոց եկեղեցու տեղը տիեզերական եկեղեցու կառույցում, բ) պապականության գերակայության խնդիրը, գ) հայոց հոգևոր նվիրապետության կազմակերպման ձևը:

³¹ I. D. Mansi. vol. 25, p. 1187-1188.

³² Տե՛ս F. Journebize, Histoire politique et religieuse de l'Armenie, Paris, 1900, էջ 350-387, L. Կոզեան, նշվ. աշխ., էջ 473-478:

³³ Տե՛ս Աղ. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ հռոմեական եկեղեցոյ ի Փլորենտեան սինոդոսի, Վիէննա, 1878, էջ 75-78, Մ. Չամչյանց, նշվ. աշխ., էջ 340-345:

³⁴ Տե՛ս Հ. Անասյան, Հայոց մոլորական համարված գրքերն ըստ լատինական մի հին ցուցակի, «Էջմիածին», 1975 (Ժ), էջ 27-39:

Քրիստոնեական եկեղեցու միասնության շուրջ ծավալված վեճերում հայոց եկեղեցին գտնում էր, որ ընդհանրությունը գոյատևել է մինչև Քաղկեդոնի ժողովը, քանի որ հունական և լատինական եկեղեցիները, ընդունելով երկաբնակության բանաձևը, հեռացան ուղղափառությունից: Ինչ վերաբերում է պապականության գերագահությանը, ապա 85-րդ կետում արձանագրված է. «...հայոց եկեղեցին գտնում է, որ մինչև Նիկեայի Ա տիեզերական ժողովը Հռոմի պապերը մյուս աթոռների վրա իշխանություն չեն ունեցել...»³⁵: Այդպիսի իշխանություն նրանց տրվեց Նիկեայի ժողովում, սակայն այն կորցրին Քաղկեդոնի ժողովում: Առաջին դեպքում ակնարկվում է Նիկեայի ժողովի հետևյալ կանոնը. «Նախնեաց սովորութիւն կացցէ յԵզրիպոսի՝ զի Աղեքսանդրի եպիսկոպոսն ամենեցուն իշխեսցէ, վասն զի եւ Հռոմայեցոց եպիսկոպոսին այս սովորութիւն է, նոյնպէս եւ Անտիոքացոց եւ այլ իշխանութիւնս եւ պատիւ մեծութեան պահեսցի յեկեղեցոջ»³⁶: Երկրորդում՝ նկատի է առնվել Քաղկեդոնի Դ տիեզերական ժողովի 28-րդ կանոնը, որը հիմք հանդիսացավ Կոստանդնուպոլսի աթոռի բարձրացման համար³⁷: Հայոց եկեղեցու այսպիսի դիրքորոշմանը պետք է համապատասխաներ այն մեղադրանքը, որը տեղ է գտել 86-րդ կանոնում. «Հայոց եկեղեցին գտնում է, որ Հռոմի պապը իշխանություն ունի միայն լատինական եկեղեցում»³⁸:

Չնայած հայոց եկեղեցուն վերագրվող «մեղադրանքները» և համապատասխանաբար նրանց պատասխանները ներկայացված չեն որևէ սկզբունքով, սակայն ներառում են արծարծվող հիմնախնդիրների և՛ պատմաավանդական, և՛ ներկա կողմերը. «Հայերը գտնում են, որ Պետրոս առաքյալին հանձնված իշխանությունը մասնավոր բնույթ ուներ և հաջորդներին չանցավ»³⁹: Խոսքն այն ավանդույթի մասին է, որ Հռոմում է քարոզել ու իր կյանքը ավարտել Պետրոս առաքյալը, որը տասներկու առաքյալների մեջ եղել է գահերեց: Նրա իշխանությունը ժառանգել է Հռոմի եպիսկոպոսը⁴⁰: Պապականության կանոնադրվածաբանական գերագահության մերժումը ամփոփ ներկայացված է 117-րդ կետում. «Հայերը չունեն այն ուղղափառ հավատը և խորհուրդները, որ ունի Հռոմի եկեղեցին, քանի որ թագավորներից և իշխաններից բացի շատ քչերն են հավատում հռոմեական եկեղեցու դավանանքին»⁴¹:

«Մեղադրանքների» ցանկում որոշ տեղեկություններ կան նաև հայոց հոգևոր նվիրապետության կազմակերպման և կառուցվածքի մասին. «Հայերը երեք կաթողիկոս ունեն, որոնք տարբեր մկրտություն և հավատք ունեն: Նրանցից հնագույնը Աղվանքի աթոռն է, երկրորդը՝ Աղթամարինը, իսկ երրորդը՝ Սսի աթոռը»⁴²: Հայոց եկեղեցուն մեղադրում են նրանում, որ ստեղծել է հորիզոնական սկզբունքով կազմակերպված եռադաս նվիրապետություն: «Հավատքով և խորհուրդներով այս աթոռները միմյանցից չեն տարբերվում, սակայն կանոնական հարաբերությունների առումով Աղթամարը Սսի աթոռի նկատմամբ հակաթոռ է, իսկ Աղվանքի աթոռը հարաբերությունները խզել է Սսի կաթողիկոսության հետ վերջինիս լատինական կողմնորոշման պատճառով»⁴³: Այստեղ և նման բովանդակությամբ

³⁵ J. D. Mansi. vol. 25, p. 1256-1257.

³⁶ «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությանը՝ Վ. Հակոբյանի, հ. Ա, Եր., 1964, էջ 120-121:

³⁷ Ст'у М. Поснов, История христианской церкви (до разделения церквей - 1054 г.). Киев, 1991, էջ 295:

³⁸ J. D. Mansi. vol. 25, p. 1257.

³⁹ Նույն տեղում, էջ 1259:

⁴⁰ Ст'у М. Шейнман, Папство, М., 1961, էջ 10:

⁴¹ J. D. Mansi. vol. 25, p. 1270.

⁴² Նույն տեղում, էջ 1223-1224:

⁴³ Նույն տեղում, էջ 1225:

մի շարք այլ հողվածներում խոսք չկա վերոհիշյալ աթոռներից որևէ մեկի գերագահության մասին:

Այս առումով ցանկանում ենք փորքր-ինչ մանրամասն կանգ առնել 78-րդ կետի պարզաբանման վրա, ուր մեղադրանքներ կան նաև Հակոբ Սսեցի կաթողիկոսի վերաբերյալ. «Փորք Հայոց (իմա՛ Կիլիկիա) կաթողիկոսի մոտ եկան իրենց մկրրտության և ձեռնադրության վրա կասկածող եպիսկոպոսներ, որոնց նա հրամայեց. ա) պատարագ չկատարել լատինական ձևով, բ) պահք և ծոմ չպահել լատինական կանոններով, գ) կրկնամկրտություն չանել և հայերին հոռմեադավան չդարձնել, դ) տղաներին լատիներեն չսովորեցնել: Վեց եպիսկոպոս ձեռնադրելու ժամանակ նրանցից ստորագրություններ վերցրին, որ իրենց թեմերի մեջ լատիներեն չսովորեցնեն և կաթողիկ քարոզիչներ չընդունեն, ե) պապին չպետք է ճանաչել Արևելքի եկեղեցիների գլուխ, քանզի ծովից (իմա՛ Միջերկրական) այս կողմ մինչև Թաթարստան ինքն է (իմա՛ Հակոբ Սսեցի - Գ. Հ.) եկեղեցու գլուխ»⁴⁴: Հակոբ Սսեցու նման քաղաքականությունն էլ հավանաբար Լևոն Ե թագավորի հետ բախման պատճառ դարձավ: Ինչ վերաբերում է ե ենթակետին, ապա հայոց եկեղեցական շրջանակներում դա նորություն չէր. «Եւ զի պատրիարքարանքն երեքին Եյուսաղեմայ, Անտիոքայ և Աղէքսանդրոյ յորժամ զպատրիարք ձեռնադրիցեն համահաճութեամբ և ընտրութեամբ հայոց հայրապետին արասցեն. և որոք նստցի յաթոռ հայրապետութեան զդաւանութիւն հաւատոյց զոր պարտէր ինձ Սեղբեստրոսիս և յաջորդաց ինձ ծանուցանել զնոյնն հայոց հայրապետին ծանուցել զի նա կարգեցի ինձ փոխանորդ և հրամանահան ի վերայ ամենից արևելականացն զաւառաց»⁴⁵:

Եթե խմբավորենք հայոց հոգևոր նվիրապետության կազմակերպման վերաբերյալ Սսի ժողովի տված պատասխանները, ապա ստացվում է, որ Սսի, Աղվանքի և Աղթամարի կաթողիկոսությունները ինքնամիտի եկեղեցական կառույցներ են: Սսի կաթողիկոսները ձեռնադրում են միայն Մեծ Հայքից եկած այն հոգևորականներին, որոնք ընծայագիր ունեն⁴⁶:

Այժմ փորձենք պարզաբանել կաթողիկոսների ընտրության հետ կապված այն խնդիրները, որոնց անդրադարձել է Սսի ժողովը: Նախ խոսվում է այն մասին, որ Աղվանքի և Աղթամարի կաթողիկոսների ընտրությունները ճիշտ չեն, քանզի դեռևս իրենց կենդանության ժամանակ նրանք ընտրում և ձեռնադրում են իրենց հաջորդին⁴⁷: Ինչ վերաբերում է Սսի կաթողիկոսի ընտրությանը, ապա այն տեղի է ունենում հետևյալ կերպ. թագավորի հրամանով հավաքվում են արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, ավագերեցներ և կնքված տոմսով իրենց ձայնը տալիս են նրան, ում ցանկանում են և տոմսերը հանձնում են թագավորին: Վերջինս ավելի շատ ձայներ հավաքած երկու կամ երեք թեկնածուներից մեկին ընտրում է կաթողիկոս և ծնրադիր նրա մատին մատանի է դնում: Մրանից հետո տեղի է ունենում օժման արարողությունը⁴⁸: Թագավորը այս դեպքում իրականացնում է աշխարհիկ իշխանության խորհրդանիշ հանդիսացող մատանու հանձնումը, այլ խոսքով կատարում է աշխարհիկ ինվեստիտուրան, որին հետևում է հոգևոր ինվեստիտուրան: Փաստորեն Սսի հայոց կաթողիկոսի ընտրությունը իր մեջ պարունակում էր երեք փուլ. ընտրություն, աշխարհիկ ինվեստիտուրա (մատանու հանձնում), հոգևոր ինվեստիտուրա (գավազանի հանձնում): Ինչ

⁴⁴ Նույն տեղում, էջ 1251-1253:

⁴⁵ Թուրք սիրոյ և միաբանութեան, Վենետիկ, 1695, էջ 24:

⁴⁶ Տե՛ս Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 1895:

⁴⁷ Տե՛ս J. D. Mansi, vol. 25, էջ 1257-1258:

⁴⁸ Տե՛ս Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 1894-1895:

վերաբերում է աշխարհականների մասնակցությանը, ապա ժողովը այն հիմնավորում է նրանով, որ բոլոր եկեղեցիները և վանքերը գտնվում են աշխարհիկ իշխանության հովանու ներքո, ուստի աշխարհականների մասնակցությունը պարտադիր է⁴⁹:

Սսի ժողովի պատասխանը Ավինիոն տարավ այն պատվիրակությունը, որի կազմում էին Հովհաննես Կրակեցի եպիսկոպոսը, Դանիել Թավրիզեցին, երկու ասպետ և պապի նվիրակը⁵⁰:

Գվիդոն Լուսինյանի գահակալությունը չթուլացրեց Կիլիկյան Հայաստանում ստեղծված ներքաղաքական լարվածությունը: Փաստորեն Լուսինյան եղբայրներին ու նրանց կողմնակիցներին չհաջողվեց ձևավորել այնպիսի միջավայր, որը հիմք հանդիսանար նրանց քաղաքական գործունեության համար. «Եւ տեսեալ Հայոց զի աշխատ առնէր զնոսա և ստեպ ստեպ վարէր ի պատերազմ, ժողովեցան բազմութեամբ մեծաւ և վառեալ ի զէն՝ գրոհ ետուն ի տեղին, ուր էր զգոնաբարոյ արքայն Գուի, բնիկ տէրն իւրեանց, և եղբայր նորա իշխանն Բոէմոնդ Լուսինեան, կոմսն Կոռիկոսի. և մինչ կային նոքա առանց իրիք զգուշութեան՝ սուր ի վերայ եղեալ խողխողեցին զնոսա դավաճան մատնութեամբ՝ զուր տարապարտուց. և հարին ընդ նոսա ի սուր սուտերի բազմութիւն մեծ արանց պատերազմի, զորս բերեալ էր արքային ի կողմանցն Արևմտից ի պահպանութիւն աշխարհին Հայոց: Եւ սպանին Հայք և զոմն քահանայ դրաներեց արքային, մինչ մատուցանէր զպատարագն: Եւ այս անցք անցին ի միում ատուր, ի քաղաքին Ադանայ, յամի տեառն 1344, յեօթնևտասներորդում ատուր ամսեալնն նոյեմբերի»⁵¹: Գվիդոն Լուսինյանի սպանության կապակցությամբ բացի Հովհ. Դարդեւի վկայությունից կարելի է եզրակացնել. ա) սա սոսկ գահակալական հեղաշրջում էր, որը գլխավորում էր Լևոն Ե ազգականներից մեկը՝ Պաղտին Մարաջախտի որդի Կոստանդինը, բ) հայոց էթնո-քաղաքական միջավայրը չհանդուրժեց օտարազգի գահակալին: Քանի որ Գվիդոն Լուսինյանի սպանությունից հետո Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշման բնագավառում կտրուկ փոփոխություններ չարձանագրվեցին, ապա դժվար է եզրակացնել, որ հեղաշրջումը կապված էր արտաքին կողմնորոշման հետ, այլ «...վասն անպարկեշտ վարուց սպանեալ եղև ի զաւրաց իւրոյ...»⁵²: Պատկերն ամբողջության մեջ ներկայացնելու համար բերենք նաև Աբու-Ֆիդայի վկայությունը. «Հիջրի 746 թվականին (1345 մայիս 4-1346 ապրիլ 3) հայերը սպանեցին իրենց թագավոր Ֆրանկ Քունդսթաբլին, որը անկարող էր վարելու գործերը և չէր պաշտպանում երկիրը, որի հետևանքով մուսուլմանները ավերներ էին գործում...»⁵³: Փաստորեն Կիլիկյան Հայաստանում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, որի պայմաններում պետական հեղաշրջումը անխուսափելի էր:

Այսպիսով, ԺԴ դարի 30-40-ական թվականներին Կիլիկյան Հայաստանի ներքաղաքական կյանքում ստեղծվել էր լարված իրավիճակ, որը կապված էր ռազմաքաղաքական ծանր դրության և արտաքին քաղաքական կողմնորոշման հետ: Ռազմական օգնության դիմաց պապականությունը պահանջում էր հայոց եկեղեցին միավորել հռոմեական եկեղեցու հետ: Այդ ժամանակ պապական արքունիքում կազմվել էր հայոց եկեղեցու վերաբերյալ «117 մոլորություններ»

⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 1895;

⁵⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 41-42:

⁵¹ Հովհ. Դարդեւ, էջ 49:

⁵² «Հիշատակարաններ...», էջ 441:

⁵³ «Արաբական արքյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց՝ Հ. Նալբանդյանը, Եր., 1965, էջ 249:

անունով փաստաթուղթը, որին պատասխան տալու համար հրավիրվեց Սսի ժողովը: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար արքունիքը որոշեց երկրի կառավարումը հանձնել Լուսինյաններին, որոնք մայրական գծով ազգակից էին Հեթումյաններին: Սակայն գահ բարձրացած Գվիդոն Լուսինյանը չարդարացրեց հայերի հույսերը և զոհ գնաց արքունիքի կազմակերպած դավադրությանը:

Г. С. АРУТЮНЯН — *Внутриполитическое положение Киликийской Армении в 30-40-х годах XIV века и Сисский собор.* — В 30-40-х годах XIV века во внутриполитической жизни Киликийской Армении сложилась напряженная ситуация, связанная с тяжелым военно-политическим положением, а также с внешнеполитической ориентацией. В ответ на военную поддержку папство требовало присоединения армянской церкви к римской. Им составлен был свод «117 заблуждений» армянской церкви, для ответа на который был созван Сисский собор. В создавшемся положении при дворе было решено передать правление Лусинянам. Однако взошедший на трон Гвидон Лусинян не оправдал возлагаемых на него армянами надежд и стал жертвой дворцового заговора.